**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-3**

ք.Երևան «28» «06» 2022թ.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայությունը, ի դեմս ծառայության գլխավոր քարտուղարի պարտականությունների ժամանակավոր կատարող՝ Գրիգոր Հարությունյանի, որը գործում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և « ՄԷՍ-ՏԵՔՍ » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Էդիկ Ջանիկի Մուշեղյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, փոխադարձ համաձայնությամբ, հիմք ընդունելով 16.12.2021թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-3 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ «Պայմանագիր») 8.5 և 8.8 կետերը՝ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

**1.Համաձայնագրի առարկան**

1.1 Հիմք ընդունելով՝ Վաճառող կազմակերպության՝ «ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ-ի, 20.06.2022թ.-ի գրությունը (ՔԿԾ մուտք՝ N5486), կողմերը որոշեցին՝ Պայմանագրի N2 հավելվածով՝ «Մատակարարման ժամանակացույց»-ով, թիվ 15 չափաբաժնով նախատեսված 1500 հատ «Շապիկ՝ սվիտերի գործվածքով» ապրանքատեսակից՝ 700 հատի մատակարարման ժամկետը երկարաձգել 30 օրացուցային օրով և 2-րդ եռամսյակի փոխարեն, սահմանել մատակարարման նոր ժամկետ՝ մինչև 2022թ.-ի հուլիսի 30-ը ներառյալ:

**2. Այլ պայմաններ**

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է N ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԷԱՃԱՊՁԲ-22/8-3 ծածկագրով պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրով չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից՝ հայերեն լեզվով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, համաձայնագրի N1 հավելվածը, համարվում է սույն համաձայնագրի անբաժանելի մասը:

**ԳՆՈՐԴ**

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայություն
ք. Երևան, Արշակունյաց-63
ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011175016
ՀՎՀՀ 02204739

ՔԿ ծառայություն՝
Գ. Հարությունյան

--------------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**

«ՄԷՍ-ՏԵՔՍ» ՍՊԸ
ք. Չարենցավան,
3 թաղամաս 17 շենք, 26 բն
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220433332420000
ՀՎՀՀ 02809532

Տնօրեն՝
Է. Մուշեղյան

--------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ